

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցին գտնվում է Էջմիածին քաղաքի կենտրոնական մասում: Այն կառուցվել է 1767 թվականին երջանկահիշատակ Ս. Ս. Սիմեոն Երևանցի Ամենայն Հայոց կաթողիկոսի օրով: Եկեղեցին սկզբնապես եղել է փայտաշեն:

Սիմեոն կաթողիկոս Երևանցին ժամանակի հավատացյալների ամենօրյա հոգևոր պահանջները բավարարելու համար, Մայր Աթոռի շրջակայքը որոշելուց առաջ, վանքից որոշ հողային տարածություն անջատելով, գյուղի հյուսիսային կողմում կառուցում է մի եկեղեցի՝ Ս. Աստվածամոր անունով, և պարսպապատում այն. «Նախապես ի շինելն զպարիսպ արքոյ Աթոռոյս, զմերձ գեղոս մեր (որ կից և անմիջոց փայտորք և խառնիխումն շինուածովք շրջակայեալ էր զսուրբ Աթոռովս) քակեալ հեռացոյց ի պարսպէս և յԱթոռոյս, և իւրով արդեամբքն վերստին շինեաց զտունսն և զԵկեղեցին ի հիւսիսակողմն, միաժողով և բնակակից իրերաց՝ որպէս տեսանես»¹:

Եկեղեցու կառուցման ճշգրիտ թվականի մասին կա մի քարե արձանագրություն, որը, ըստ վկայության, Սիմեոն կաթողիկոսն է գրել տվել եկեղեցու արևմտյան դռանը (քարը գտնվել է եկեղեցու Ավագ սեղանի նորոգության ժամանակ և գետնովել եկեղեցու ներսի պատերից մեկում). «Ժինեցաւ սուրբ եկեղեցիս, և հեռացաւ գեղոս յԱթոռոյն ի շինել պարսպի նորին, արդեամբք եւ հրամանաւ Տեառն Սիմեոնի սրբազան կաթողիկոսին Երիւանցոյ, ի պատիւ Սրբութիւնոյ Աստուածածնին, յորոյ անուն իսկ կառուցաւ, ի ՌՄԺԶ» (1216+551=1767 թ.)²:

Ինչպէս ասացինք, եկեղեցին նախապես կառուցվել է փայտակերտ, որն անշուշտ

չէր կարող երկար դիմանալ ժամանակի քայքայիչ ազդեցություններին: Ուստի, ըստ ներքոհիշյալ վկայության, եկեղեցու փայտակերտ կառուցումից մեկ դար հետո, ումանց կողմից (չի հիշատակվում, թե ո՞ւմ կողմից) այն փոխարինվել է քարակերտ կառույցի. «Յետ դարու միոյ առ մեօք քակեալ զեկեղեցին՝ շինեցին քարակերտ և ընդարձակագոյն եւս ի վերայ վեցից սեւանց»³:

Եկեղեցու շրջապատում եղել է ման մի վարժարան. «Հաստատեցաւ և վարժարան առ նմին արդեամբք Յովհաննոյ Ծամբոսեանց»⁴:

Եկեղեցին ունի բազիլիկ ձև, երկարավուն տանիքով, որն ընդունված է հայկական ճարտարապետության մեջ: Զանգակատուն չի ունեցել: Զանգերը ժամերգությունների և սուրբ պատարագի ժամանակ ղողանջել են հատուկ պատրաստված զմբեթաձև մի երկաթյա սարքից, որից կախված են եղել երկու զանգեր: Այն տեղադրված է եղել տանիքի վրա և եկեղեցու վերանորոգության ժամանակ՝ հանվել:

Եկեղեցու արտաքին մասում, պատերի մեջ, տեղադրվել են մի քանի հայկական խաչքարեր՝ քանդակված նույն ժամանակաշրջանում:

Ս. Աստվածամոր եկեղեցին ունեցել է շատ հովիվներ, որոնք իրենց հոգևոր ծառայությունն են քերել հավատացյալ ժողովրդին: Դրանցից առավել հիշատակելի է 1947-ին Պարսկաստանից Մայր Հայրենիք ներգաղթած Տ. Քերովբե ավագ քահանա Ծախբազյանը (հանգուցյալ), որն իր ժամանակին, մեծամեծ դժվարություններ հաղթահարելով, նույնիսկ անձնական զրկանքներ կրելով, կարողացել է հասցնել մի արժանի

¹ «Զամբոս», Վաղարշապատ, 1878 թ., էջ 36—37:

² Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890 թ., էջ 209;

³ Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890 թ., էջ 209:

⁴ Կոյուն:

հոգևոր սերունդ. ադ պատանիներից շատերը հետագայում դարձան ազնիվ և միլիթանտ հոգևոր սպասավորներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու (1 եպիսկոպոս և 5 ամուսնացյալ քահանա): Տ. Քերովբե ավագ քահանան իր մահկանացուն կնքեց 1969 թվականին՝ իրենից հետո թողնելով ազնիվ և միլիթանտ հոգևորականի բարի հիշատակ. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Ս. Աստվածածին եկեղեցին իր ծաղկուն շրջանն ապրեց մանավանդ Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա շնորհազարդ Հայրապետի գահակալության շրջանում: Հայոց Հայրապետը, որ մեծ ուշադրություն էր դարձնում Հայաստանի պատմական վանքերի և եկեղեցիների վերանորոգությանը, իր հայացքը սևեռեց նաև Էջմիածին քաղաքում գտնվող Ս. Աստվածամոր եկեղեցու վրա: Եկեղեցու հիմնական վերանորոգությունը սկսվեց 1978 թվականին, երբ Հայոց Հայրապետի կարգադրությամբ եկեղեցու պատասխանատու և ապավանհաբայր նշանակվեց Տ. Հովսեփ քահանա Հակոբյանը, որը երջանկահիշատակ Տ. Քերովբե ավագ քահանայի սաներից էր:

Անցան տարիներ, և եկեղեցին նորոգվեց թե՛ դրսից ու թե՛ ներսից: Կառուցվեց մի նոր Ավագ սեղան ֆելզիտ քարից՝ նախկին աղյուսե սեղանի փոխարեն: Մաքրվեցին ներսի պատերի բոլոր ծեփերը, և երևաց գեղեցիկ շարված քարը: Երեսապատվեցին 12 թաղերը, որոնք այնքան էլ լավ շարված վիճակ չունեին: Փոխվեց սալահատակը, գետնեղվեցին նոր գեղեցիկ բլուրեղապակյա երեք ջահեր և նոր սրբապատկերներ: Նորոգվեց մկրտության ավազանը, որի կենտրոնում գետնեղվեց մի մարմարյա քանդակազարդ խաչ: Տուֆ քարով երեսապատվեցին երկու խորանները: Փոխվեցին եկեղեցու երեք դռները և քանդակներով զարդարվեցին: Պատրաստվեցին նոր գեղեցիկ քանդակազարդ մոմակալներ և ալյն:

Հիմնովին վերաշարվեց եկեղեցու տանիքը նույն քարով, կառուցվեց նոր պարիսպ և նրա վրա դրվեց երկաթյա գեղեցիկ ցանկապատ: Եկեղեցու շրջապատը օծովեց գեղեցիկ երկաթյա դարպասներով: Կառուցվեց վանահոր սենյակը՝ իր հարակից մասերով: Գեղեցկացավ և կանաչապատվեց եկեղեցու շրջապատը:

Այս բոլոր աշխատանքների պատկեր անշուշտ հանդիսացավ նորակառույց զանգակատունը, որի շինարարությունը ավարտվեց 1986 թվականին: Սքանչելի մի կառույց,

որի բարձրությունը 27 մետր է: Դեպի երկինք սլացող այս գեղեցիկ զանգակատունն ունի նաև երեք զանգեր, որոնցից մեկը եկեղեցու հին զանգն է, փոքր, բայց՝ զորնգուն: Զանգակատունը, որի բացման արարողությունը կատարվեց ա. թ. սեպտեմբերի 20-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Տ. Վազգեն Ա Հայրապետի նախագահությամբ, բոլորի հիացմունքի առարկան է: Եկեղեցին վերանորոգվեց արգենտինահայտեր և տիկին Վահե և Դորիս Չննոյանների միջնորդությամբ, որոնց եկեղեցաշեն գործի ու սրտաբույս միջնորդի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունները:

Նորակառույց զանգակատան և մնացած բոլոր վերանորոգչական աշխատանքները կատարվել են Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պրն. Արծրուն Գալիկյանի գլխավորությամբ: Այդ աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել ճարտարապետ պրն. Հակոբ Բաբախանյանը, ինժեներներ Ավետիս Թեքնեջյանը և Արշավիր Դազարյանը: Հիմնական քարային աշխատանքները կատարել են վարպետ-քարտաշներ Հակոբ Կատյանը և Գևորգ Գազազյանը՝ բարեխղճությամբ և մեծ վարպետությամբ: Վերոհիշյալ աշխատանքներին իրենց մասնակցությունն են բերել նաև Մայր Աթոռի երկաթագործները, մարմարագործները, ներկարարները, ատաղձագործները և այլ աշխատողներ, որոնք իրապես մեծ ոգևորությամբ ու բարեխղճությամբ կատարեցին իրենց վստահված աշխատանքները:

Այս առթիվ պետք է խորին շնորհակալություն հայտնել Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Արքեպիսկոպոս Ս. Տ. Վազգեն Ա շնորհազարդ Հայրապետին, որն իր հայրական հոգածությամբ և օրհնությամբ աջակից եղավ այս բոլոր գործերի իրագործմանը:

Ծնորհակալություն նաև Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ պրն. Արծրուն Գալիկյանին, ճարտարապետ պրն. Հակոբ Բաբախանյանին, ինժեներներին և վերահիշյալ վարպետ-քարտաշներին ու աշխատողներին, որոնք իրենց նպաստը բերեցին, որպեսզի եկեղեցին դառնա իրապես ներկայանալի մի աղոթատեղի հայ հավատացյալ ժողովրդի համար ի Հայաստան:

«Երանի եկեղեցի շինողաց»:

ՀՈՎՍԵԺ ՔԱԶԱՆԱ, ՀԱԿՈԲՅԱՆ
Վանահայր Ս. Աստվածածին եկեղեցու



Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ



ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ ՏԻԿԻՆ ԴՈՐԻՍ ՉՆՆՈՋՅԱՆԻ, ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ
ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊՍ.
ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ԵՎ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՆԱՀԱՅՐ Տ. ՀՈՎՍԵՓ
ՔԱՀԱՆԱ ՀԱԿՈՐՅԱՆԻ ՀԵՏ